32. ՓԸՇԿՈՆԸ ՌՆՈ

Մեկ մարդու մի իրեք տղա կէղնի։

Էտ մարդն ա, օր մի գեղի իշխաներ կը խանչա ուր տուն, կըսա.

— Գինա՞ք, ըռեսներ, ձզի խանչեր իմ ·ր՝ իմ սաղիքան իմ մալ բաժնիք վըր իմ տղեկներուն, հ՚ընչի օր իմ մալ ջատ ա, չէղնի հ՚ետի սողին իմ տղեկներ հ՚իրար դատամ·հրում[1] հանին։

— Շատ աղեկ,—ըսին իշխաներ,—դը բի՛ր, տեսնինք, ի՞նչ ա քու մալ, մենք լե հալալուտենով բաժնինք։

Գացին բերեցին օր՝ մեկ կատու, մեկ լոզ, ու վաթսուն փարա յա։

— Դե,—ըսեց տղեկներու պապ,—մաճլիս, ջաղամաթ, փայ էրեք, իմալ օր մընասըպ կը տեսնիք։

Մաճլիս փայ էրեց։ Կատուն՝ տվեց ջոջ տղին, լոզ՝ միջնեկ տղին, վաթսուն փարեն լե՝ պզտկին։

Հ՚առեջ պզտիկ տղեն առավ վաթսուն փարեն ու գնաց։ Ծամպու հետ հ՚ինք ուրին մտմտաց ու ըսեց.

— Մշու դաշտ խարճ ու խարաճ գուզին, դեղածիք նեղուտենի մեջ ին, կը տանիմ իմ փարեն կիտամ, հ՚եժան գնով կավըռ կառնիմ։

Տղեն էր, էտ մարախով կը քելեր ու կէրտեր։ Գիշեր էր, հասավ Կյալա-ռաշու[2] ձոր։ Քուն զոռեց վրեն, դառծավ ըսեց քնուն.

— Քո՛ւն արի՛ ընծնե վա՛զ կեցի, իտա խըտըր փարա կա մոտսի, գիկան ընծի կըսպանին, փարեն կը տանին։

Էրեց ու չէրեց՝ քնու հետ չէղավ։ Զարնաչար հանեց քսան փարա թալեց քնուն։

---

1 Զրկեն իրար ժառանգությունից (Ս. Բ.)։

2 Վայր Մշու դաշտում (Ս. Բ.)։

— Քո՛ն, ընծնե վա՛գ կեցի,—ըսեց ու քելեց։

Գնաց ճամբու հետ, իշկեց օր հանտա քոռ մուկ մի՝ հրմա հող կը փորա ու կիտա վրը ուր ղլխուն։

— Ջա՛նըմ, մուկ,—ըսեց,—քու նեղուտեն ի՛նչ ա, դու իտա հող հ՝որի՞ կիտաս քու գլխուն, ա՛ռ իտա քսան փարեն քզի, պրծի էդ նեղուտենից։

Քսան փարա լե մկան թալեց ու հ՝ընցավ։

Փշում տեղ գնաց, տեսավ օր հանտա քոմ մի դզեզ լցված ա մըշ թրքին հրմա կը կլորին ու կը տանին։

— Հալլա՛, հալլա՛, տո՛ դզեզներ, ձզի՞ ինչ ա ձեռ տվե, հ՝ընչի՞ իտըմլա ձեր ձեռ ու ոտ կը թրքոտիք, քիթ ու մռութ ձզի կը լավոտիք։ Առե՛ք իտա քսան փարեն, էտ նեղուտենից պրծեք։

Քսան փարա լե էտոնց թալեց ու գնաց։

Տղի փարեն խլըսավ, գնա՛ց, գնա՛ց հասավ Ավզաղբուր։ Էտ գեղի ռեսի տուն էղավ չըպուխչի։ Գեղի մեջ մեկ փաշե մի կար։ Էտոր աղջիկ ըսկի չը զրուցեր։ Ո՛րն օր տեր զրուցք՝ ընտոր պտի տեր փաշեն ուր աղջիկ։

Էղավ օր՝ օր մի գեղի իշխան մաճլիսներ քոման օր էրտան, աղջկան տան զրուցք։

Տղեն ուր աղին ըսեց.—Աղա՛, ես լե գիկամ ձեր հետ։

— Տղա՛, լաո,—ըսեց աղեն,—դու իտհըմլա կղտոտ, ժպռոտ, ժանկռոտ դո՞ր գիկաս, մենք օր սըհաթով, քոսթքով, հալա հալով ինք, մեր հետ չը գրուցա, քու հե՞տ պտի զրուցա։

— Բան չէղնի,—ըսին ըռեսներ,—թրխ դա էնտեղ, մզի խզմաթ կէնա։

Տղեն էր, հ՝ելավ էտոնց հետ գնաց փաշի տուն։ Հ՝ինք մնաց ճար կայնուկ, ըռեսներ լե հ՝ելան վերին դին խուռմիշ էղան։

Ինչ էրին-չէրին, չարա մուքուն չէղավ։ Աղջիկ չը զրուցեց։ Ըռեսներ հ՝ելան օր էրտեն, տղեն ըսեց.

— Զզնե ըռճա կէնիմ օր նստիք, բան մը լե ես պտի ըսիմ։

Ըռեսներ նստան։ Տղեն ուր պապու դոլվթի խսեն ու ուր գըլխու ահվալ մեկ-մեկ խըսա էրեց աղջկա հ՝առեջ։ Աղջիկ նակյաստան զրուցեց ու ըսեց տղին.

— Աստված քու տուն ավիրա ու քու պապու գոլվթին, է՞տ էր կը պարզենցուցեր։

Տղեն ջաղամաթի մեջ բոռաց ու ըսեց.

— Շըհատ մացեք, աղջիկ զրուցեց։

Ջուապ գնաց փաշին, փաշեն ամր էրեց օր, աղջիկ տան տղին։

Բերին աղջիկն ու տղեն պսակին, դրին հ'օղի մի մեջ։

Մեկ սատանա մոլե մի ծռուկ էր վըր էդ աղջկան։ Էկավ տղին ըսեց.

— Տղա, լաո, հա՜ն քզի հինդ քիսա փարա, մէրթա մըտ աղջիկ։

Տղեն էր, խանմիշ էղավ մոլին, չգնաց։ Քաշեց ջոթ մի վըր գլխուն, ջոկ տեղ մի պարկավ։

Մոլեն էդ հըմալ փարա տալով, իրեք օր վըր հ'իրար տղին խաբեց։ Իրեք օրն օր թըմավ, աղջկա մամ խոնչով-բոխչով էկավ աղջկա տեսուտեն։ Ներս օր մտավ, տեսավ օր աղջկա նիաթ կախ։ Լացե, տրորվե, հ'աչքերն ուռե։ Ըսեց.

— Տո՜ լաո, դու հ'ընչի՞ իս իտըմլա էղե, ինչ օր գերեղմներուց քաշին։

— Թաո՜ւ, նանե՜, աստված քու տուն ակոլա,—ըսեց աղջիկ,— իտա տղին օր տվեր իք ընծի, ծռու, բլելի մեկն ա, ընծի կը թորկա, կէրտա պատի տակ քոռ հավու պես կը կուճուրվի։

— Օր հ'ըմալ ա,—ըսեց մամ,—քու պապուն կըսիմ, թըխ տղին կորցու, քզի լե կիտանք մոլին։ Մոլի սիրտ համին կպերա քզի։

Տղեն էր, դռան հ'ետև կանուկ, էտոնց խըսեն հ'անկաճ կէներ։

— Տո՜, ըպա մոլեն ընծի դուպարա՜ ա էրե,—ըսեց ու փախավ մըջ գեղին տափավ։

Լուսուն հ'ելան, տղին դաշին, չը գտան։ Ճամրին մոլի հ'ետև, մոլեն ուրխնելեն էկավ։ Բերին մոլեն ու աղջիկ պսակեցին։

Էդ բան հասավ Դզեզի հ'անկաճ։ Դզեզն էր, շուտ մի թռավ, գնաց քոռ Մկան ու Քնու մոտ, ըսեց.

— Ախպեր, էդ տղեն մզի էտքան աղեկուտեն էրեց, մզի նեղուտենից պրծուց։ Արե՜ք, էրտանք ընտոր հավարին, բալքի մոլի գլոխ օղիաթ մի հանինք։

Մուկն ըսեց.—Իմ ձեռնեն ի՞նչ գիկա, ես ի՞նչ կրնամ էնիմ մոլին։ Դզեզ, գիտի Դզեզ, բալքի դու բան մի էնիս։

— Ա՜խպեր, իմ ձեռնեն լե էնքան բան չելնի։

— Օր հըմալ ա Քուն, գիտի Քուն, էլման դու բան մի էնիս։

— Ախպե՜ր,—ըսեց Քուն,—իմ ձեռնեն էնքան բան գելնի օր, ծանտր քուն մի թափիմ վըր մոլին օր՝ իրեք օր ու իրեք գիշեր տեղեն չը խլվլա։

Խոսք ուրանց էրին մեկ ու վազան մոլի բոլոր։

Աֆանտըմ, քուն թափավ վըր մոլին, հըտ գահուն ջրըպաց գետին, էղավ չոր փետ։

Մուկն ըսեց.—Նոր էկավ իմ տեղն, օր մտնիմ մոլի փոր։

Մուկն էր, սլվլաց մտավ մոլի փոր։

Դղեզն էնդիուց ըսեց.

— Ահա՜ն, իմ տեղ լե նոր էկավ։

Մուկ մոլի փորից դուս կիտեր, Դղեզ լե հրմա կը կլորեր ու կը թափեր վրը տախտին։

Հ՝ելավ աղչիկ, ավել առավ ձեռ, իրեք օր վրը իրարու ավլեց։ Էն կավլեր ու ընտոք կը լլնեն, էլ աստված նշանց չի տա, հոտու աղչիկ գիժռավ, դեղնավ, խելրթփավ։

Իրեք օրն օր թմավ, աղչկա մամ առավ բարկենչա։ Էլման էկավ աղչկա տեսուտեն։ Դուռն օր բացեց, էլ աստված ետ ու հեռուն էնա, մեկ գեշ հոտ մի զարկեց մամու քիթ։

— Աղչի՜, լաո, էդ ի՞նչ հոտ ա,—ըսեց մամ։

— Աստված քու պապու տուն ակոլա,—ըսեց աղչիկ,—էն տըղեն հ՝իստակ էր, սերսուփ էր, իտա կաբած պատանք մոլեն էկե չէկե, փիցուկ հ՝ընկե գետին, բան մի փորուց կիտան դուս, դղեզներ լե հրմա փանճարից ու դռնեն ու կը դզվզան ու գիկան։ Ես մեկ կավլիմ, հազար ու մեկ կը լցվին։

Մամն էր, քշտապնդվավ, վազավ իրկա մոտ։ Իրիկն էկավ, բռնին մոլի օտնեն, քաշին թալին մըջ չեշմին։ Նոր գացին տղին գտան, բերին էլման աղչիկ պսակին վրը տղին։

Մեկել աղբեր լե, լոզ պլուլեց մըջ թաղքին, կախեց կշտեն ու գնա՜ց մըջ գավրոցոց հ՝ելավ դուս։ Գավրոցիք ձեռով փետ կը ճղրտեն, ըսեց.

— Հ՝որի՞ ձեռով փետ կը կտրուտիք, հաճաթ չունի՞ք։

— Հաճա՞թն ի՞նչ ա,—ըսին։

Տղեն հանեց լոզ հ՝ընկավ փետերու մեջ, մանտրտեց, թափեց վրը հ՝իրար։

Էդ բան օր տեսան գեղացիք, վազան մըջ գեղին, ձեն տվին հ՝իրարու.

— Տո՜, հըլա արե՜ք, տեսեք լոզ աղբեր ի՜նչ մարիֆաթով ա։

Գեղացիք թափան էկան, քոման լոզի տիրոջ գլխուն, լավելով, դավելով հարիր օսկի տվին, լոզ գնեցին։

Լոզ տարան գորով գեղի մեջ փետ կը կտրտեն։

Օրմ՝ լե դոր հ՝ընկավ ըռես Կյավխոյի տղին։ Կյավխոյի տղեն հ՝առջի դըրպ զարկելուն, զարկեց ուր ձեռաց բիլակ տարավ։ Արուն հ՝ելավ ծավոլեց Կյավխոյի տղին, էտի էտ տեղեն բռռաց.

— Հըլա ա՜րեք, լոզ աղբեր ծռավ, զիմ ձեռ կերավ։

Գեղացիք վազան էկան, լոզ տվին խուրղուշունի հ՝առեջ, զարկին ու զարկին հոգի ուրանց չը հրոհաթավ, իտհաղս բերին քաֆր փետեր լցին վրեն ու վառին։ Բալանբոց հ՝ելավ վեր, ալաֆ չորս թարաֆ բռնեց։ Էտրով լե չը մնաց, բացին օր իշկեն՝ տեսան օր լոզ կարմրե, էղե կրակի կտոր։

— Օհո՜,—ըսեցին,—գիաի հ՝ելեք փախնինք, օր էտի նոր ա կարմրե, հրմա հ՝ելավ մզի հում ու լում կուտա։

Ժողվան դավռագիտուններ, ըսին.— Չէ, էդ հրմլա չէղնի, բերեք թալինք մեր Կյավխոյի մարագ, օր չը կռնա դուս հ՝ելնի։ Կյավխոյի մարագ լիք պռպրզման խոտ էր լցուկ։ Աղա՜, լոզն օր թալեցին մեջ, բալանբոց հ՝ընկավ մըջ մարգին, մարագ լե խոտի հետ կպավ ու վառավ։

Գեղացիք տեսան օր չարա չկա, գեղով բարձան ու դե՛ գիտի՝ փախի՜։

Լոզ աղրոր հ՝երեսեն դեղն էղավ խարապա, դրռ հրլա մկա մկա խարասլա յա։

Մեկել աղբեր լե առավ ուր կատուն, դնաց, մեկ էրկիր մի հ՝ելավ դուս, օր ըսկի կատու չը տեսած ևն։ Օր մի, մեկ տուն մի խոնախ էղան հ՝ինքն ու ուր կատուն։ Խոնխի տեր հաց բերեց։ Տղեն տեսավ օր յոթ ութ ջեհել քաշին վեռևր կայնան ուր գլխու վերև։ Շաշավ մնաց։ Հարցուց.

— Եբոր ընծի կըսպանեք, էլ հ՝ուրի՞ իտա հաց տվեցիք։

— Ախպեր,—ըսեցին։—խո քու համար չէ, մեկ ջանավար մի կա, գիկա հաց կը փախցու, ընտոր կը քշինք։

Փշում լե մնաց, չը մնաց, հրմա էն դեն ու էն դեն պատի ծկնեբրուց մկներ թափան ու էկան։ Ամեկ քըց կատու մի։

Տղեն դողտու թեռան միջեն կատվին թողեց։ Աֆանտրմ, կատուն ճվճրվուն էցկեց մկներու մեջ։ Էն էն դեն լարեց, էն էն դեն խեղտեց, որ փախավ սուս ու քութ էղավ։ Գեղացիք քոման վըր տղի գլխուն։

— Էդ ջանավրի անուն ի՞նչ ա,—ըսին։

— Փըշկո-Նըռնո ա,—ըսեց տղեն։

— Տո, վո՜ւյա, մեր անծի շապիկ լե էղնի, պտի ծախինք, առնինք Փըշկո-Նըռնոն,— ըսին գեղացիք, ու քոմեցին մըջ հ՝իրարու, էրկու հարիր օսկի տվին, կատուն առան։

Փոխտեփոխտ օրական մեկ տուն կը տանեն կատուն։

Էլ աղաթ, էլ իքրամ, տո՜ ես ի՞նչ գինամ՝ էլ օչխար մորթել, կատվի պատիվ էղեր էր շահի պատիվ։

Օրմ՝ լե դոր հ՝ընկավ մեկ աղքատ պառվու մի։ Պառավ ճետ մի ուներ։ էն լե մորթեց կատվի հ՝ապով։ էվեց, կարմրցուց, բրտուճ մի տվեց ուր թոռու ձեռ, հ՝ինք լե գնաց դուս ջրի։ է՞, պառվու թոռ ճիժ, ձեռ դրեր էր վըր մսին։ Կատուն անոթի, մեկ քենիմ անգամ զըվըռնեց էրեխի բոլոր, ատատորեց, ճանկ թալեց, մսի կտոր փախցուց։ էրեխեն ահու վժվժուն մի դրեց։ Արնլըվա ձեռներ քսեց քիթ ու մռութ, լավոտեց զինք մեկ հաղ։ Գեճտանգեճ պառավ դուռ բացեց, տեսավ օր էրեխեն արնլըվա գետնի վրեն կը թապլտի ու կը վժա, կատուն լե պոչ տնկե, կը նրռնըռա ու էրեխի բոլոր կը զըվըռնա։

Պառավ հըտ գահուն կուժ թալեց ու փախավ։ Հավար տարավ մըջ գեղին.

— Արե՞ք, հա՞, արե՞ք, Փըշկո-Նըռնոն ծռեր ա։

Գեղածիք ո՞ր թըվընքով, ո՞ր թրով վազան էկան ու պառվու հ՝երգըկեն ա՞ռհա էրեցին խուրղուշուն, ետև դուռ ու հ՝երդիկ կալուցին ու գացին, օր չէղնի կատուն փախնի։

Մնաց մեկ ժամանակ մի։ էկան, գուռ բացին, տեսան օր ցրտու կատուն մտե մըջ թունաբան։

— է՞, ո՞ր բռնա, ո՞ր չը բըռնա, պտի Կյավխոն բռնա,—կըսին գեղացիք։

Կյավխոն ա, ապեն կը փռա վըր թունտրան, զինք կը թալա վրեն, կը պլուլա, կը բռնա կատուն։

— Գիտի, իմ ձին բերեք,—կըսա։

Կը հեծնի ուր ձին, կատուն կառնի հ՝առեջ։ Ձիավորտանք կընկնին ետ։ Կէրտան հարի Մուրատ գետի կարմնճի վրեն։ էդ տեղ Կյավխոն կենա օր ապեն թոթվա, կատուն թալա մըջ ջրին։ Իմալ օր հ՝ըմալ կէնա, խոճա կատու, դու կատու էղնիս, էլ չընկնի մըջ ջրին, ըպա՞, ճանկեր կը թալա, կը կախվի ձիու քթեն։ Ձին կը փըռփըռա ու կը թուվըռկա դես ու դեն։ Մեկ լե բիրտան ինքն ու Կյավխոն ու կատուն ա՞ռհա՝ մըջ ջրին։

Ձիավորտան տեսան օր Կյավխոն սրկավ ջրի տակ, հըմա ձին լողալեն դուս հ՝ելավ՝ կատուն լե թամքի օրտեն նստուկ։ Ձին շիտկվավ դեմի գեղ, դե գիտի փախի, կատուն լե վրեն։ Ձիավորտան փախան, գլղլուն էցկին խազեն[1]։

— Գիտի՞, փախեք օր Փըշկո-Նըռնոն՝ հ՝ավալ պայա էր, մկա էղե ձիավոր, գիտի՞ հա գիտի՞, փախեք օր պրծնիք։

---

1 Գավառ, շրջան (Ս. Բ.)։

Աֆանտրմ, հելեն ընկավ աշխարհ։ Գեղացիք բառձան ու փախան։

Փըշկո-Նըռնոն յոթ գեղ ավիրեց, հ՝ելավ ծառի գլոխ նստավ։

Ջուապ գնաց Բոտան ու Շերվան, թե՝ գիտի ի՞նչ կէնիք օր Փըշկո-Նըռնոն հ՝ելե ծառի գլոխ գուրբի կիշկա, քենի հ՝աչք կը կտրա՝ պտի ավիրա, դը փախե՞ք օր պրծնիք։

Աղա՞, էն խաղեն լե տընովի բառձան ու փախան։

Փըշկո-Նըռնոյի հ՝երեսեն շատ տներ քամբխան։